53. ԱՍՏԾՈՒ ՕՂՈՐՄՈՒԹԵՆ

Կէղի, չէղի, խընձ աստված աղեկ չէղի։

Կէղին իրեք ընգեր, կէրթան խարիբութեն։ Կիքան թաքավորի փանջարի տակ նստին օր խաց ուտին։

Էն մեկ ընգեր կվերցու կասա.— Ա՜խ խոզըլ[1] թաքավոր ընձի խուռջիմ՝ օսկի տեր, ձի մի ու ծեռք մի ջոր։

Մեկելն էլ կասա.— Խոզըլ թաքավոր ընձի տեր ուր աղչիկ, խուռջիմ՝ օսկի, ձի մի ու ծեռք մի ջոր։

Կվերցուն էն մեկել ընգերոջ կասեն.— Դու լե հ՝ուզա, Միրզա Մահմատ։

Միրզա Մահմատ կասա.— Ես աստծուց օղորմութեն կուզեմ, թաքավորուց պան չուզեմ։

Թաքավոր փանջարեն նստուկ էր, էն իրեքի խոսք լսեց, մջակն ճամփեց զիրեքի հ՝ետև կանչեց։ Ասաց.— Լաո՜, դուք ի՞նչ հ՝ուզեցիք փանջարի տակ։

Էնոնք վախեցան ուրանց վերեն, ասեցին՝ «Չէղի՞ թաքավոր ուրանց վնասութեն էնե»։

Թաքավոր ասաց.— Լաո՜, մի՜ վախենաք, ծըղի պան չըմ ասեր եմ։ Ինչ օր հ՝ուզեր եք, ասե՜ք, կիտամ։

Էն մեկ լե ուրախցավ, ասաց.— Թաքավոր ապրած, ես ասացի թաքավոր ընձի ծեռք մի ջոր, խուռջիմ՝ օսկի, ձի մի տա։

---

1 Երանի թե (Ծ. Բ.)։

Թաքավոր կասա ուր մշկրներուն.— Էտոր ծեռք մի ջոր, խուռջիմ՝ օսկի ու ձի մի տվեք, թրխ էրթա։

Թաքավոր էն մեկելին կասա.— Դո՞ւ ինչ հ՚ուզիր։

Էն լե կվերցու կասա.— Ես հ՚ուզեցի թաքավորի աղչիկ, ծեռք մի ջոր ու ձի մի։

Թաքավոր կասա.— Պիրեք ծեռք մի ջոր, խուռջիմ՝ օսկի, ձի մի ու իմ աղչիկ՝ տվեք էդա մարթուն, թ՚էրթա։

Դառնա էն մեկել տղի վրեն կասա.— Դե՛, դու լե հ՚ուղա։

Տղեն կասա.— Ես բան չուզեմ քըզնե, ես աստծուց օղորմութեն կուզեմ։

Էն լե կասա.— Լաո՛, արի ընձնե հ՚ուզա, ես տամ, աստված հ՚ո՞ւստեն կուտա։

Տղեն լե կասա.— Չէ՛, ես քու տված տանեմ կուտեմ, խըլըսի, լե՛ աստծու տված չը խըլըսի։

Ախըր ինչ կէնեն, տղեն կանդրմիշ[1] չէղի։

— Տարե՛ք հափըսխանեն[2],—կասա թաքավոր։

Տղեն տարան հափըսխանեն։ Տակը ջուր ա, ճաղ լե զարկուկ վըրեն, տղեն իրեք օր կախեցին վըր էղա ջրին, քիթ ու բերնի վրեն, անոթի, ծարավ։

Թաքավոր վերցու կասա մշկրներուն.— Գացե՛ք, զէն տղեն պերեք, սանք ի՞նչ կասա։

Ջտղեն կառին հ՚իքան։ Տղեն ա պերեցին թաքավորի մոտ։ Թաքավոր վերցու կասա.— Տղա՛, լաո՛, հ՚ուզա, քի իտամ, տեսա՞ր քի ի՞նչ խընդար չարչրեցի։

Կասա.— Ես աստծու օղորմութեն կուզեմ, քըզնե չըմ հ՚ուզեմ պան մի։

Թաքավոր վերցու կասա.—Լաո՛, քու վիզ կտանիմ ջալադ էնեմ։

Էն լե կասա.— Էնես, չէնես, ես աստծու օղորմութեն կուզեմ։

Թաքավոր կասա.— Ջալադչուն կանչեք, իդա տղեն տվեք ջալադի։

Ջալադչին էկավ, պերեց ըրաղի խմեց, աչկեր կարմրավ։ Առան զտղեն, ջալադչին տարան խանի մի մեջ կանան։

Տղեն տեսավ օր ուր ընդեր, ձին խեծուկ, խուռջին օսկին լե հ՚ետև էկավ էնտեխ կանավ թամաշա։ Տեսավ օր փոթորիկ մի էղավ, քամի, ձուն ու բուք էտտեխ խառվան իրար։ Ջալադչին ուր

---

1 Չի համոզվում (Ծ. Բ.)։

2 Բանտ (Ծ. Բ.)։

Թուրն թալեց, էն ձիավորն էկավ ուրին հ'առեճ, թուր կտրեց զէտոր-վիզն։

Տղեն շուտ հ'ելավ խեծավ վըր էտոր ձիուն, յա՜ լլա, թողեց կնաց։

Ջալադչին ղարձավ էկավ թաքավորի մոտ։

Թաքավոր հարցուց, ասաց.— Վիզ կտրեցի՞ր։

Կասա.— Կտրեցի, էկա։

Տղեն կէրթա զուր ձին կծախա, զօսկին լե կլցա քըրչ-դոշկի մի մեջ, կէնա ուրին յաթաղ։ Կէրթա տեսի թաքավորի փեսեն էն տեխ-կանուկ ա, կասա էտոր.— Ձի չպոնե՞ս քըզի մշակ։

Կասա.— Կպոնեմ, հ'որի՞ չպոնեմ։

Կէրթան ճամփու խետ։ Ջադըր մի կզարկեն էտ տեխ նստին։ Թաքավրու փեսեն կվերցու կասա մշակին.— Մշա՜կ, մշա՜կ, կայ-վե մի էփա, պե խմիմ։

Մշակ կահվեն կպերա։ Թաքավորի փեսեն կխմա[1]։

Կասա մշկուն.— Գնա, ընձի կերակուլ էփա։

Էն չուր կէրթա կերակուլի, թաքավորի աղչիկ կբոռա.— Մշա՜կ, մշա՜կ, մ'էրթա, թաքավորի փեսեն մեռավ, էլ կերակուլ մ'էփեր։

Մշակ կդառնա, կիքա, կասա.— Իմա՞լ մեռավ, չէ՞ նոր սաղ էր։

Աղչիկ կասա.— Մեռավ, իմա՞լ էնեմ։ Ըպա դե հ'ելի տար խոր-ա։

Տղեն կտանի զթաքավորի փեսեն խորա։ Տառնա հ'իքա թա-քավորի աղչկա մոտ։

Թաքավորի աղչիկ կասա.— Մշակ, մշկութենով չարա չէղիր-արե թաքավորի փեսի շորեր խաքիր։ Ուրիշներ սորա կիքան կղար-կին մեր դլխու վերեն, զիս լե կտանին, զօսկի արծաթ լե կտանին։ Շորերն օր խաքիս, կասին թաքավորական նըշներ ա, էլ մեզի զիան չէնեն։

Տըղեն շորեր կխաքի, նըշներ կառի վըր թևերուն, կելնին ու-րանց պեռներ պարցին կէրթան, գեղի մի ռաստ կիքան։ Գեղի ռե-սին կասին. «Մըզի կունախ մի տուր»։ Էնոնք լե իրարու կուրախ-նան, կասին.— Վա՜ լլա, պըտի տանենք մեր խան՝ օրտեղ մարթ կմեռնի։ Էդի զանգին ա, էտոր փարեք մնա մըզի։

Տարան մտուցին էն խանի մեջ։ Էն տղեն մշակ մի աշալա կան-չեց պոնեց, ուրանց ճուր ու մուր պերա։

Էն լե վերցուց ասաց.— Աղա՜, ես ֆուկարա եմ, ընձի մաճիթե

---

1 Բնագրում՝ խմեց (Ծ. Կ.)։

·մի տուր, իմ կնիկ, ճիժ անոթի են, տանեմ իտամ կնդան, ճրժուն, հ՝իքամ մնամ ձեր մոտ, էլ չէրթամ։

Փարեն կառնի մշակ, կէրթա։ Կիշերն չի գա։ Էն լե գիտա, թե էն կիշեր խանի մեջ մնացող կմեռնի։

Խասան կես կիշեր, տեսի օր թաքավորի աղչիկ, սև շորերով մարթ մի ուրին փետ մի կղարկա, աստծու թոփ ա, էնմալ օր կայիմ ու ծանդր ա։ Թաքավորի աղչիկ կկժար, զինք կթալա Միրզա Մահմատի օտներու մեջ։

Միրզա Մահմատ կասա.—Մը՛ վախենա, մը՛ վախենա, սյան չկա, ես էլ չքնիմ, կնստիմ պախիմ քի։

Միրզա Մահմատ նստի կպախա։ Աչք կպի, չկպի՝ մեկ լե տեսավ օր սևաթաթախ մեկըմ էն դեխեն էկավ, ծեռ վերցուց օր զարներ, Միրզա Մահմատ ծեռ թալեց, պռնեց, ասաց.— Օ՜, իմ անուն Միրզա Մահմատ ա, դու ընձի կանա՞ս աղթե։

Սև շորերով մարթն ասաց.— Օր հրմալ ա, դու ընձի աղթիր։ Դե՛, հ՝ելի էրթանք, օլորդինք օդեքներու մեջ, սանք ի՞նչ կա, ի՞նչ չկա։

Կելնին, կէրթան պըտոտվելու։ Էն սև շորերով մարթն խրիշտակ ա աստծու, կանաչ վարոց կղարկա մեկ դռան, կպացվի դուռ։ Մեջն օսկի կա, արծաթ, մանր փարա կա, հ՝ըմեն ճոկ-ճոկ, կոլոն-կոլոն լցուկ ա։ Խրիշտակ աստծուն կխառցու, կասա.— Միրզա Մահմատ, էդ ի՞նչ ա։

Էն լե կասա.— Աստծու օղորմութեն ա։

— Թե չասեր աստծու օղորմութեն ա, ես քըզնե կառնի։

Կիտա կանաչ վարոց Միրզա Մահմատի ծեռք ու կխամբարձի էրկինք։

Միրզա Մահմատն ա, դռներ փակեց վարոցով, էկավ թաքավորի աղչկան մոտ, ասաց.— Թաքավորի աղչիկ, հ՝ելի օլորդինք էտա օդեքներու մեջ, սանք ի՞նչ կա, ի՞նչ չկա։

Էն լե կասա.— Ցամա՜ն, ես կվախենամ, չիշխընամ։

Միրզա Մահմատ կասա.— Հ՝ելի՛, զէն մարթ աղթեր եմ, մը՛ վախենա։

Կելնին էրթան պըտոտվին հ՝օդի մեջ։

Միրզա Մահմատ կանաչ վարոց ծեռ, զարկեց դռներ պացեց, ասաց.— Թաքավորի աղչիկ, դե էս փարեք, մեճիտիեք, օսկիք կոլոնուկ ա, ճոկ-ճոկ։ Թաքավորի աղչիկ, էդի ի՞նչ ա։

Էն լե ասաց.— Աստծու օղորմութեն ա։

Թորկեցին, դռներ փակին, էկան նստան ուրենց, չուր լուացավ։

Միրզա Մահմատ առավ ճուր, գնաց դուս լվացվելու, տեսավ օր էն դեխեն դեղի մարթիկ ուրախնելեն կիքան, կըսեն՝ «էրթանք, մըկա էն մարթ մեռեր ա, փարեն կիսենք վըր իրարու»։ Կիքան տեսին օր սաղ ա։ Կտըրտըմին, դառնան։ Մշակ լե էն դեխեն կվազնի, կիքա, օր կիդա աղեն մեռեր ա, բալքի պանմ՝ էլ ինք զանա։ Խո տեսնի աղեն սաղ ա։

Միրզա Մահմատն ա, հ՝ելավ գիր գրեց, զարկեց դռան պատ դուս, ասաց.—Վո՛ն օր հ՝իքա ընդեխեն ասա՝ «Միրզա Մահմատի գլոխ սաղ մնա», հ՝ման լըցե, պեռներով օսկի տանի։

Ընտոր ծեն ցրվավ աշխըրքներ, էրկրներ, հ՝ըմեն մարթ կիքա զարկա էնոր դուռ, կասա՝ «Միրզա Մահմատ սաղ մնա». Միրզա Մահմատ էնտոր բեռ օսկով կլցա։ Թիակ օր կզարկա օսկի կխանա, շուտ, աստծու օղորմութենով տեխը կլցվի։

Միրզա Մահմատի ծեն կէրթա թաքավորին, կասա.— Էմլամարթմ՝ էլե աշխար, ցրվրա, չցրվրա, խըլիս չկա։

Թաքուհուն կասա.— Հ՝ելի, դավրեշ կըլըխ[1] խաքինք, աշխըրքներ պտոտվինք, չուր Միրզա Մահմատ գտնինք, սանք էտ իմա՞լ մարթմ՝ ա, օր էդմալ օսկի կցրվա։

Օր էմալ կասա, կելնին կփոխվին, կէդնին դավրեշ, դավրեշ կըլըխի, կիքան Միրզա Մահմատի քոշկի տակ կանին։ Միրզա Մահմատ, տեսին օր օսկի կցրվա։ Վո՛ն օր կիքա կասա՝ «Միրզա Մահմատի գլոխ սաղ մնա», կլցվի ու կտանի։

Թաքավոր կասա.— Էդ իմա՞լ ա, զարմանելի ա, էտ ի՞նչ դովլաթ ա։ Ես իմ խազինեն էմլա օր ցրվիմ, էրկօր կխըլըսցում։

Միրզա Մահմատ կդառնա վըր դավրեշներուն, կասա,— Արեք, էրթանք էղիք ընձի մսաֆիր։

Տանի դնա օդե մի։ Թաքավորի աղչկան կասա.— Հ՝ելի, դավրեշներուն խաց տուր, թրխ ուտեն։

Աղչիկն ա, կըլնա կերակուլ տանի էրկու դավրեշ ուտեն։ Չը ճանչնա ուր խեր ու մերն են։

Գիքա իրիկուն, Միրզա Մահմատ ցրվե՞ց, ցրվե՞ց չում արեն ըռհաթավ[2], էլ չցրվավ։ Փայտոսթ[3] կէնա, կասա՝— Խերիք ա, էլ չըցվրամ։

Միրզա Մահմատ կասա թաքավորու աղչկան.— Իրիկուն կերա-

---

1 Տարազ (Ծ. Բ.)։
2 Մայր մտավ (Ծ. Բ.)։
3 Շարաշ (Ծ. Բ.)։

կուլ լե էվա, չորս դոշակ թալա, օր իրիկուն էն դավրեշներ կանչենք ցածր, խաց ուտենք։

Հ'իրիկուն էն էրկու դավրեշ օր կմտին ներս, աղչիկ Միրզա Մահմատի դոշակ թալեր ա թաքավորի դոշկից պանցր։

Միրզա Մահմատ կիշնի, խընձ աղչկա դոշակ լե ցածր կնստի։

Դավրեշ զՄիրզա Մահմատ մեծարա, կասա.— Պանցրրցի։

Միրզա Մահմատ դդավրեշ կմեծարա, կասա.—Թաքավոր ապրած, դու պանցրր նստի։

Կասա.— Դու էմա՞լ հ'իմցար օր ես թաքավոր եմ։

Միրզա Մահմատ կասա.— Դու թաքավոր ես, էն քու թաքուհին ա, էն լե քու աղչիկն ա։

Թաքավոր կզարմանա, կասա.— Էդ իմա՞լ պան ա։

Կասա.— Թաքավոր ապրած, իմ դլխու քաշած քե պատմե՞մ։

Կասա.— Խա, պրտի պատմես։

Կպերին չայ, կահվա, խաց, կերակուլ կուտեն ուրենց։

Միրզա Մահմատ կասա.— Թաքավոր ապրած, ես էն տղեն ինք, օր քեզնե բան չուղի, աստծու օղորմութեն հ'ուզի։ Դու ընձի տարար կախեցիր, շալադչուն տվեցիր։ Աստված խանեց փոթորիկ, ջալադ զարկեց էն տզի վիզ, օր էնոր տվիր խուռջիմ՝ օսկի, ձի մի, ծեռք մի շոր։ Ես էն տեխեն էկա, էդա քու փեսի հ'առեճ մշակ։ Քու փեսեն նադախտան[1] ընդավ մեռավ, քու աղչիկ զոռով քու փեսի շորեր խաքուց ընձի։ Մենք էկանք էդա խանին ռաստ, աստված խրիշտակ էրաց սև մարթու կայդեն[2], խրիշտակ էկավ էդար քու աղչկան, ես բռնեցի զխրիշտակ, ու օլորդանք էսա խանի մեջ, տեսանք օր կանաչ վարոցով դուռ էպաց, լիքն օսկի էր լցուկ մեջ։ Թաքավոր ապրած, քանի ցրվեմ՝ չի խըլսի, աստծու օղորմութեն ի, ես լե կշտանամ, աշխար լե կշտանա։ Լե քու տալով, մարթ չկշտաներ։ Էդա լե քու աղչիկն է, չուր էսօր իմ քուր, իմ մեր ա էլե։ Կիտաս ընձիկ, դո՛ւ կինաս, չիտաս ընձիկ, դո՛ւ կինաս։

Թաքավոր լե կվերցու կասա.— Ըպա, խընձ քըզի աղեկի՞ մի պրտի տամ։

Ինք ուր ձեռնով կպերա վըր իրարու, ուրենք՝ թաքավորն ու թաքուհին կէրթան ուրենց տուն։

Էնոնք խասան ուրենց մուրազին, դու լե՝ քու։

---

1 Հանկարծ (Ծ. Բ.)։

2 Նման, նմանակ (Ծ. Բ.)։